

# Ո՞ՒՐ Է ԳՆՈՒՄ ՀԱՅ ԺՈՂՈՎՈՒՐԴ

*Posted on September 10, 2022 by Keghart*



Category: [Opinions](#)



*Վերապահութեամբ կը հրապարակենք պարոն Յովասափեանի այս յօդուածը:  
Համաձայն ըլլալով հանդերձ հակառուսական արտառոց  
արտայայտութիւններու յօդուածագրի քննադատութեան, պետք է նշուէին այդ  
արտայայտութեանց առիթ տուող պատճառները, որոնց մէկ կարելոր մասին  
հեղինակը նոյն ՌԴ-ի իշխանաւորներն են՝ իրենց թրքամետ կամ  
թրքասիրական կեցուածքներով: Ցաւօք, այս կողմը կը բացակայի յօդուածին  
մէջ, որով եւ հիմք կու տայ մեր վերապահութեան:*

**Սամվել Հովասափյան, Բեռլին, 31 Օգոստոս 2022**

**Այո՛ ՌԴ-ի արտաքին քաղաքականութեան տեղին քննադատութեանը,  
ո՛չ հակառուսական, երբեմն նվաստացուցիչ բարբաջանքներին**

Հայ ժողովրդի ներկայիս կացութիւնը աչքի առաջ ունենալով՝ ակամայից մտաբերում ես անցյալը ու ցանկանում ես երբեմն զուգահեռներ անցկացնել ներկայի հետ՝ հասկանալու համար վերջին 150 տարիների արհավիրքների բուն պատճառը: Հեշտ է, սակայն, ապակողմնորոշող, միայն թուրքին, ռուսին, Արևմուտքին ու այլ ուժերին ու պարագաներին մեղադրելն ու մոռանալ նայել հայութեան հավաքական տիպարին, որը գլխավոր գործոնն է: Թե՛ անցյալում և թե՛ ներկայում, ասենք տարբեր ժամանակներում և ամենուր էլ, հայ անհատը կարողացել է ու կարողանում է հակադրվել այլ և այլ դժվարություններին ու ելք է գտնում հաջողութեան հասնելու համար, իսկ նույն անհատներն պիտանի չեն հավաքականութեանը, իմա հայ ժողովրդին վտանգող մարտահրավերները ժամանակին ճիշտ գնահատելու ու ելք որոնելու՝ միասնութեան գալու համար. ո՛չ, նրա եսը նրան թույլ չի տալիս, պարզապէս նա անընդունակ է հավաքագրման ու տվյալ անհրաժեշտ պահին միասնաբար ելք որոնելու, երկրին ու ժողովրդին վտանգող՝ արտաքին թշնամիներին դիմակայելու:

Հիշել պե՞տք է, թե Օսմանյան լծի տակ տառապող արևմտահայութիւնը ինչպիսի՞ իրավիճակում էր: Բարձր խաղը բոլորովին կտրված էր գավառահայութիւնից ու նրա հոգսերով չէր ապրում, նույնպէս և քաղաքների միջին դասը, իսկ բանվոր-բեռնակիր ու աշխատավոր բնակչութիւնը ու նաև գավառահայութիւնը, գրեթե՝ հայութեան մեծամասնութիւնը, հասու չէին ազգային պետականութեան գաղափարին և թե ինչպէս կարելի է հասնել դրան: Նույնիսկ բարձր խաղը միատարր չէր, կային թրքական վերնախավի հետ սերտաճած, կային եւրոպամուկներ ու եւրոպական նոր գաղափարախոսութիւններով տարված անձեր, որոնք էլ եվրոպայի օրինակով ստեղծեցին իրենց կուսակցութիւնները, սակայն դարձյալ կտրված գավառահայութիւնից: Ու բոլորովին հստակ է, որ այդտեղ ազգային գաղափարների շուրջ միասնութիւն գալու բոլոր ջանքերը ապարդիւն էին լինելու ու եղան եւ փոխանակ փորձել սուլթանի հետ լեզու գտնել ու ինչ որ չափով թեթևացնել գավառահայութեան կացութիւնը, եվրոպական պետութիւններին դիմելու որոշ շրջանների աշխատանքներն ու տարբեր ֆիդայական խմբերի իրարից անկախ անձնագոհ արարքները, փորձանք

**Էին լինելու ու եղան արևմտահայության համար...**

Արդյո՞ք հարկ կա նշելու, որ ներկայիս Հայաստանի որոշ անհատների ու շրջանների հակառուսական, հաճախ անվայել ու նվաստացուցիչ արտահայտությունները՝ ուղղված ոչ միայն քաղաքական գործիչներին, այլև ռուս ժողովրդին, ինչ որ տեղ հիշեցնում են անցյալը...

Անցյալում դա այդպես է եղել, իսկ ներկայումս անկախ Հայաստանի ու Արցախի լինել-չլինելու հարցն է օրակարգում դրված, իսկ հայությունը՝ Հայաստանում, որը այսօր գլխավոր դերակատարն է, մի քանի մասի բաժանված, երբեմն նույնիսկ՝ իրար նկատմամբ թշնամաբար տրամադրված...

Նման կացության համար որի՞ դուռը գնաս: ՌԴ մեղա գաս...

**Մի՞թե այլ կերպ կարո՞ղ եր լինել: Մի՞թե անհամար արհավիրքներից հետո հայությունը խելքի եր գալո՞ւ: Ռ՛չ**

Որովհետև մեր եսն է, որ ներկա է ամենուր, թե՛ սփյուռքում, սկսած փոքր համայնքների ներսում բոլորովին ոչ-էական հարցերի շուրջ անհամաձայնություններից, և թե՛ Հայաստանում, որտեղ ներկայումս բազմաթիվ կուսակցություններ, լրատվական կայաններ, կայքեր, խմբեր ու անհատներ, ասպարեզ են իջել իրենց (չ)ասելիքը՝ ասելու, որոնք երբեմն ոչ միայն անտակտ են ու հայկական պետականության հիմքերը խարխլող, այլև իրենց հակասական, զարմանալի անմակարդակ ու հակառուսական քարոզչությունով «քաջագործությունները» ոչ միայն ՌԴ-ի պետության բարձր պաշտոնյաների, այլ նաև ռուս ժողովրդի մոտ թշնամություն են ստեղծում հայության հանդեպ:

Այո, ամեն մեկս մեր դիրքում պատասխանատու ենք ներկայիս կացության համար, սակայն միայն ազգի ապագային ու հայկական պետականությանը հասցրած հետագա վնասների չափանիշներով է երևալու մեր մեղքի չափը, սակայն դարձի գալու ու մեղանչելու, ոչ մեկս պատրաստ չենք: Խոսքը իհարկե ամենից առաջ անցյալ իշխանությունների չարաբաստիկ ու պետականությանը հասցրած վնասների մասին է: Բազմաթիվ են նրանց «քաջագործությունները», հանրությանը հայտնի են այդ բոլորը, այստեղ կարևոր եմ համարում հիշել ու հասկանալ, թե նրանք ի՞նչ մոգական ուժով և ինչո՞ւ երկրի բոլոր կարևոր ու շահութաբեր գործարանները ինչ-ինչ պատճառներով հանձնել են ՌԴ -ին, արդյունքում՝ ավելի ամրապնդելով նրանց ներկայությունը Հայաստանում ու կիսագաղութային երկիր լինելու պարագան:

Այո, փաստ է, որ մոտ երկու հարյուր տարի է ինչ Ռուսաստանը իր մեծապետական շահերը հետապնդելով գաղութացրել է Կովկասի մի շարք երկրներ, Հայաստանի դեպքում, ինչպես ժամանակի մտավորականությունն է վկայել, դա փրկություն էր: Դժվար չէ պատկերացնել, թե ինչպիսի ապագա էր սպասում Արևելյան Հայաստանի տարածքներին, եթե դրանք մնային Պարսկաստանի կազմում: Ասել պե՞տք է, որ 1828 թվականից ցարական Ռուսաստանի, իսկ հետո Խորհրդային Միության կազմում, այդ

տարածքները նոր միայն Հայաստան դարձան... Որի համար, թե՛ ռուս ժողովուրդը և թե՛ հայ ժողովուրդը արյուն են տվել: Բայց ժամանակների կտրուկ փոփոխումը շատ երկրների թվում, նաև Հայաստանին անկախություն բերեց: Ըստ երևույթին Ռուսաստանի Դաշնությանը որոշ պետական գործիչներ ու շրջաններ, հին մեծապետական հովերով տարված, չեն կարողանում հաշտվել այդ պատմական փաստի հետ ու փորձեր են անում իրենց դրածոների միջոցով կրկին գաղութացնել այդ երկրները, ինչը որ Հայաստանի պարագայում նրանց հաջողվել է, իսկ դա նկատում է յուրաքանչյուր ոք, ով Հայաստան է մտնում, նշանակություն չունի, թե որ սահմանից: Սա պատմական իրական ու թվում է, թե անշրջելի փաստ է: Այո, իրականություն է, որ Ռուսաստանի Դաշնությանը ամուր է նստած Հայաստանում: Ոչ միայն այդ, այլ Հայաստանի արտաքին առևտրական կապը, գրեթե ամբողջովին կայանում է ՌԴ -ի հետ ու ռուս-վրացական միակ սահմանի միջոցով: Ի՞նչ կլինի Հայաստանի հետ, եթե այդ սահմանը որոշ շրջանների չարակամության պատճառով մի քանի շաբաթ փակվի... Ահա նման փաստերին դեմ-հանդիման գալով լրիվ անհասկանալի է թվում ու վնասակար ներկայիս հակառուսական քարոզչությունը Հայաստանում, որը վերջին ժամանակներին հատուկ թափ է ստացել եւ որի դեմ բողոքել է նաև ՌԴ -ի դեսպանատունը:

Այսօր Հայաստանում հակառուս լինելը ասես նորածնություն է դարձել. կան լրատվական կայաններ ու անհատներ, որոնք այնքան կատաղի են, որ անցնում են բոլոր պատշաճության սահմանները: Արժե՞ հիշել, որ դրանց շարքը գլխավորում են մի շարք անձեր, ովքեր ասես հատուկ առաջադրանք են կատարում, ահա այսպես.

-Թամրազյան.- Ազատության կայանի ոչ բարով կիրակնօրյա վերլուծությունների հաղորդավար: Թող ինձ ներվի մեջբերել նրա հարցազրույցի մի դրվագ, ուկրաինացի ինչ որ հայի հետ, որի ընթացքում այդ հայը առանց այլևայլի Պուտինին «կատաղի շուն» է անվանում, իսկ Թամրազյանը լռում է, ազատ խոսքի հնարավորությունը շփոթելով Պուտինին ազատ վիրավորելու հետ:

-Յուրի Վարդանյան.- բաց հեռուստակայանի մեկնաբան: Նրա ասածը արդեն գլուխգործոց է, մեկնաբանության ոչ արժանի... Նա մի հարցազրույցի ընթացքում բարկացած ու բարձրաձայն մի ռուս բարձր պաշտոնյայի անգրագետ է համարում, նա չգիտի, թե՛ ո՞վ է հայկական տառերն ստեղծել ու ավելացնում է. «Այն ժամանակ, երբ մեր մեծն Մեսրոպ Մաշտոցը հայկական այբուբենն էր ստեղծում, իրենք այսպես ասած դեռ ծառերից չէին ներքև իջել...»: Երևի այդ պարունը չգիտի, որ գոռոզությունն ու խոսքի ազատությունը նաև իրենց սահմանն ունեն...

-Չիբուխչյան.- նրա հակառուսական բարբառանքները այնքան կատաղի են, այնքան անմակարդակ, որ չարժե դրանք հիշել...

Այս շարքը կարելի է լրացնել, ազնվագարմ ԱԺԾ-ման լիդերների ինչպես նաև այլ գիտուն

**ու իսլամի անձանց անուններով:**

Իհարկե նման կատաղի հակառուս քարոզչությունը չէր կարող ՌԴ -ում ապրող հայության շրջաններում անհանգստություն չառաջացնել ու իրավունք ունեն այն անձինք, ովքեր քննադատում են այդ ու չափավորության կոչեր են անում...

**There are no comments yet.**